

7027

3 K 172
—
7-22

1931

ՀԱՅԱՍՏԱՆԻ (Բ) ԿԵՆՏՐՈՆԻ ՊԼԵՆՈՒՄԸ
ՀԱՅԻ ՏԱՐԱԾՈՒՅԹ


1931

ԲԱՆԱԶԵՎԵՐ

1 ՑԱՆՔԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ՅԵՎ. ԲԵՐՔԱՀԱՎԱ.Ք.Ա.ՔԻ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ
ԽՆԴԻՐՆԵՐԸ

2 ՅԵՐԿԱՌԹՈՒԳԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԸ ՅԵՎ.
ՆՐԱ. ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3 ՄՈՍԿՎԱՅԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒ-
ԹՅՈՒՆԸ ՅԵՎ. ԽՍՀՄ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ



ՊԵՏՀԱԾՈՑ

1931

ՅԵՐԵՎԱՆ

13 SEP 2013

ՀՕՏԴ

1 DEC 2009

23 SEP 2006

ՀԱՅԿՈՍԿՈՒՄԻ (Բ) ԿԵՆՏՐՈՆԻ ՊԼԵՆՈՒՄԸ
ՀՈՒՆԻՍ 1931

ԲԱՆԱՁԵՎԵՐ

1 ՑԱՆՔԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ՅԵՎ. ԲԵՐԲՈՀԱՎՈՎ. Ա.ՔԻ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ
ԽՆԴԻՐՆԵՐԸ

2 ՅԵՐԿԱՐՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՄՈՐՏԸ ՅԵՎ.
ՆՐԱ. ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3 ՄՈՍԿՎԱՅԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒ-
ԹՅՈՒՆԸ ՅԵՎ. ԽՈՀԾ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ



1931

ՅԵՐԵՎԱՆ

ՑԱՆՔԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՅԵՎ ԲԵՐ-
ՔԱՇՎԱՀԱԳԻ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀԱՄ. ԿԿ(Բ) ԿԵՆՏԿՈՒՄԻ ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱԶԵՎՆ ԸՆԿ.
ՑԱԿՈՎԼԵՎՆ ԶԵԿՈՒՑՄԱՆ ՅԵՎ ԸՆԿ. ԿՐԻՆԻՑԿՈՒ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ 1931
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-ԻՆ

1

1. 1931 թվականի գարնան արդյունքը յեղափ այն,
վոր կոլեկտիվ շարժումը վճռական հաղթանակներ տա-
րավ ԽՍՀՄ-ի շրջանների մեծ մասի գյուղատնտեսու-
թյան հիմնական ճյուղերում:

ա) Կոլեկտիվացումն ավարտվեց հիմնական հո-
գահատիկային շրջաններում (Դաշտային Ռազմային և պարագանական հարաբեկության համար կովկաս, Ստորին Վոլգա, Միջին Վոլ-
գայի Զալյուստին, Դաշտային Դրիմ), վորտեղ կո-
լեկտիվները միացրել են անտեսությունների ընդհա-
նուր թվի ավելի քան 80 տոկոսը և գյուղացիական
բոլոր ցանքերի ու գյուղատնտեսական արտադրության
միջոցների ավելի քան 90 տոկոսը:

բ) Մյուս հացահատիկային շրջաններում (Կենարո-
նական Սևահող մարզ, անտառադաշտային Ռէկրայի-
նա, Միջին Վոլգայի աջ ափը, Ղագախստանի Հայա-

Պատմատիք տպարան
Հրատարակ. 1745
Գլուխին 6588 (Բ)
Թատվեր 3344
Տիրած. 6000

հաստիկային շրջանները, Արևմտյան Սիբիրը, Ռուսալը, Բաշկիրիան, Հեռ. Արև. յերկիրը) և բամբակաղործական ու ճակնդեղի շրջաններում (Ուզբեկստանի, Ղազախստանի, Թուրքմենստանի և Աղրբեջանի բամբակաղործական շրջանները, Կենտրոնական Սևանողմարդի և Ռէկրայինայի ճակնդեղի շրջանները) կորեկտիվները միացնում են բոլոր տնտեսությունների ավելի քան 50 տոկոսը և դուռըաշխական ցանքերի ավելի քան 60 տոկոսը: Այդ հնարավորությունն է տալիս այնտեղ Հիմնականում ավարտել համառարօն կորեկտիվացումն այս տարի, համենայն դեպք վոչ ուշ, քան 1932 թվականի դարձունը:

Այդ բոլորը նշանակում են, վոր կուեկտիվացման այն ահմարը, վոր ուրվագծել եր կուսակցության կենտրոնական կոմիտեն իր 1930 թվականի հունվարի 5-ի վորոշումով և կուսակցության 16-րդ համագումարի ու խորհուրդների 6-րդ համագումարի վորոշումներով, արդեն գերազանցված են:

Դ) 1931 թվականի ցանքը տվեց միացված, կուեկտիվ անտեսության արտադրողականության նոր բարձը որինակները մայիսի մի հնգորյակի ցանքը ԽՍՀՄ-ում (9 միլիոն հեկտար), զդալի չափով զերազանցեց անցյալ տարվա մայիսի մի հնգորյակի ցանքից (6 միլիոն հեկտար), մեքենատրակտորային կայանները մըշտեկային կուսանսական գարնանացանի ավելի քան մի մերորդ մասը (20 միլիոն հեկտարից ավելի), կոլտնակառության յուրաքանչյուր ձին համարյա յերեք անգամ ավելի ցանք կատարեց, քան անհատական տնտեսության մի ձին, կոլտնակառության մեջ յուրաքանչյուր տնտեսության ցանքը 2-3 անգամ ավելի յի, քան ան-

հատական տնտեսության ցանքը, կոլտնակառության մեջ բարելավվեց հողի մշակման վորակը:

Դրանից հետեւում ե, վոր կոլտնակառական գյուղացիությունն արդեն դարձել է հողագործության կենտրոնական դիմքը, վոր կոլտնակառությունները դարձել են կիմնական արտադրությունը վոչ միայն հացահատիկի, այլև գյուղատնտեսության կարեւորագույն հումուրթի արտադրության մեջ (բամբակ, ճակնդեղ, արևածաղկի և ալի):

Անհատական չքավորի և միջակի գերը գյուղատնտեսության արտադրության մեջ դարձել է յերկրորդական: ԽՍՀՄ-ի հացահատիկային և հումուրթային ըրչաններում ավարտվում ե կուլակության, վորպես դասակարգի վերացումը:

2. Խորհրդային տնտեսությունների ցանքի տարածությունը, համեմատած 1930 թվականի հետ, ընդուրածակիվ և ավելի քան յերկու անգամ: Զերնուրեալը, անասնաբուժական տրեստները, տեխնիկական մշակույթների խորհճանակառությունները, 1931 թվականի զարնանը ցանելով ավելի քան 8 միլիոն հեկտար հող, փոխանակ 1930 թվականի զարնան 3.2 միլիոն հեկտարի, գերակատարեցին խորհուրդների 6-րդ համակառարի առաջադրանքը: Երջանների մեծ մասում խորհճանակառությունները ցանքը վերջացրին 2-3 շաբաթ ավելի շուտ, քան կոլտնակառությունները:

3. Ծնորչիվ խորհանակառությունների զարգացման և աշխատավոր գյուղացիության մեծամասնության կուեկտիվացման ուղին անհեղնելուն, մեր յերկիրը դարձավ անհնախոշը գյուղատնտեսության յերկիր աշխարհում: 1931 թվականի զարնանը մեր 200.000 կոլեկ-

տիվ տնտեսությունները (վորոնք միացրել են 13 միլիոն նախկին անհատական տնտեսությունները), 4000 խորհութեալքյան հետ միասին ցանել են բոլոր ցամքերի յերկու յերրորդ մասից ավելի տարածություն մինչդեռ մնացած 12 միլիոն անհատական գյուղացիական տնտեսությունները կարողացել են ցանել ամբողջ ցանքի տարածության միմիայն մոտ մի յերրորդ մասը

II

Սոկայն անցյալ տարվա փորձը ցույց է տալիս վոր հանգստանալ կոլեկտիվացման ու ցանքի կամուսնիայի հաջողություններով և թերաքնահատել զորքավարձի խորը լրջությունը կոլտնտեսությունների ամբացման ու բերքահավաքի տապարիդում, կնշանակել հոկայական միաս հասցնել կոլեկտիվացման գործին:

Խոչոր տնտեսություն վարելու փորձի պակասությունը և յեկամուտների բաշխումը վոչ թե ըստ աշխատանքի, այլ ըստ շնչի, վոր լայն տարածված երանցյալ տարի, ունեցան այն հետեւանքը, վոր շատ վայրերում բերքահավաքը լրիվ չկատարվեց. բերքահավաքի ժամանակ տեղի ունեցած կորուստները շատ մեծ ելին կոլտնտեսություններում, իսկ աշխատավարտ տարածությունը բավարար չափով չեր ընդարձակված

Խորհութեալքյուններում նույնպիսի բացասական գեր կատարեցին մեքենաների վաս ոդասպորտունաները, «դիմադրիումը», այն, վոր կոլտնտեսություններ և զեկավար կադրերը թերադնահատում ելին բերքահավաքի համար կատարությունների և մոռացել են մեջ մշակություն պահանջող տեխնիկական մշակույթին խորհութեալքյունների, վորպիս ապրանքը այս կերի մեծ հողամասեր ունեցող կոլտնտեսությունների, պարտականությունները, այն եւ գոյն

Հիայն ցանել, այլև հանձնել պետությանն իրենց արտադրանքը, սահմանված ժամկետներին և վորոշված չափով:

Վերոհիշյալ թերությունները վեխացնելու նպատակով, կենտրոնական կոմիտեյի պլենումն առաջարկում է կուսակցական կազմակերպություններին, միջոցներ ծեռք առնել իրավուրծելու բերքահավաքի կամուսնիայի հետ կապված հետեւյալ ձեռնարկումները.

1. Կոլտնտեսություններում առանց բացառության բոլոր աշխատանքները պետք է կազմակերպված լինի գործակարձի սիստեմով այնպիս վոր դորժավարձն ունենաւ ամենապարզ ու յուրաքանչյուր կոլտնտեսականին հասկանալի ձեվեր և կոլտնտեսականի աշխատանքների որերը հնարավոր լինի արձանագրել նրա աշխատանքային գրքույթում, առանց բարու հաշվարկամների, հաշվի սոնելով կատարված աշխատանքի ուչ միայն քանակը, այլև վորտեկը:

Գործադրությունի կիրառման ասպարիգում խորհութեալքյունները պետք են նույնպիս որինակ տան կոլտնտեսություններին, ինչպիս արտադրության կազմակերպման և նոր մեքենաների կիրառման ասպարիգում:

2. Ամեն տեսակ աշխատանքներում պետք է տրակտորներին, ճիերին և մեքենաներին ամրացնել աշխատավայրի մշտական կազմ, յուրաքանչյուր կալսիչ մեխանիզմների, մշտական կազմ, յուրաքանչյուր արակտորին իր կցվող մեքենաներով, պետք է ամրացնել մշտական բրիդագ, պետք ուսուցիչ սայլապանների մշտական կազմ և այլն:

Մեծ կոլտնտեսություններում, ինչպիս և շաբաթին կատարությունների մասնակից աշխատական մշտական պահանջող տեխնիկական մշտական պարույթին, պարտականությունների մեծ հողամասեր ունեցող կոլտնտեսությունների, պարտականությունները, ապրանքը և գոյն

րում, բրիդադները պետք եւ ամբացվեն բերքահավաքի վորոշ հողածառերին, վորակեսպի բրիգագի աշխատանքային որերի զնահատումը բարձրանա կամ նվազի, նայած բերքահավաքի ժամանակ տեղի ունեցած կորուստներին և բերքահավաքի արագության:

3. Միաժամանակ հետեւլով, վոր կոլտնտեսությունները ժամանակին կատարեն կրնտրակտացիոն սլայմանազբերով նախատեսված, իսկ խորհուտեսությունները արտադրական պլանով նախատեսված՝ իրենց արտադրանքը հանձնելու պարտականությունները կուսակցական որդանները և հողային որդանները պետք է միջոցներ ձեռք առնեն, վոր 1931 թվականի ամառը և աշնանը հերկվեն 15 միլիոն հեկտար ցել աշնանացանի համար, ցանվի 43 միլիոն հեկտար աշնանացան հացահատիկ, վորից առնվազն 15 միլիոն հեկտարը ցորեն, աշնանավար արվի 42 միլիոն հեկտար հող, վորից 9 միլիոն հեկտարը խորհուտեսություններում և 31 միլիոն հեկտարը կոլտնտեսություններում։ Այդ առաջազրանքներին իրականացնելու համար, անհրաժեշտ եւ ճշշտ բաշխել մարդկանց, ձիերին, տրակտորներն ու մեքենաներն աշնան բոլոր աշխատանքներում և ապահովել նընդ առաջելական արտիկուլար արվին, վորից մինչեւ յերբահավաքի ցանքի և քաղհանի կամպանիայի ժամանակ յուրաքանչյուր կոլտնտեսականի կատարած աշխատանքի որերի հաշվարկումը։

4. Դործավարձը հնարավոր չե իրականացնել առանց ժամանակին հաշվառման յենթարկելու յուրաքանչյուր կոլտնտեսականի կատարած աշխատանքային որերի

թիվը։ Դեռ ավելին, առանց հաշվառման հնարավոր չե կոլտնտեսության, վորակես խոչըր տնտեսության, դոյլությունը։ Կոլտնտեսություններում հաշվառումը կազմակերպելու բնագավառում կուսակցական կազմակերպությունները պետք եւ ղեկավարվեն ինքնինի հետեւյալ ցուցմունքով՝ «հաշվառումը և աշխատանքի քանակի ու մթերքների բաշխման վերահսկողությունը»—դա յե սոցիալիստական վերակառուցման եյությունը, յերբ ստեղծված և ապահովված և պրոլետարիատի քաղաքական տիրապետությունը»... «Սոցիալիզմը նախ և առաջ հաշվառում ե»։ Կենտկոմն առաջարկում ե կուսակցություններին՝ առանց բացառության և խորհրդային կազմակերպություններին՝ առանց բացառության բոլոր կոլտնտեսություններում միջոցներ ձեռք առնել, վոր մինչեւլ բերքահավաքի սկիզբն ախարտվի ցանքի և քաղհանի կամպանիայի ժամանակ յուրաքանչյուր կոլտնտեսականի կատարած աշխատանքի որերի հաշվարկումը։

5. Բերքահավաքի հաջող կառարումն ապահովելու համար կուսակցության կազմակերպությունները պետք եւ հասուկ ուշադրություն դարձնեն յեկամուտները կոլտնտեսականների մեջ կանոնավոր և ժամանակին բաշխելու վրա։ Կենտրոնական կոմիտեյի պլենումն առաջարկում ե կուսակցական կազմակերպություններին՝ յեկամուտները հետեւյալ կանոններով բաշխել կոլտնտեսություններում։

ա) Կոլտնտեսություններում յեկամուտների բաշխումը պետք եւ վերջանա ամենաուշը մինչեւլ հունվարի 15—20-ը։

բ) Յուրաքանչյուր կոլտնտեսություն, յեկամուտների բաշխման պլանը հաստատելիս հիմնական ծախ-

սերի համար (անբաժան Փողը) Հատկացնում և յեկամուտների առնվազն 10 տոկոսը նոր կազմակերպված կոլտնտեսություններում և առնվազն 15 տոկոսը՝ Հիմամբացած կոլտնտեսություններում:

գ) Յեկամատից կոլտնտեսականներին Հատկամուդ նորուրալ մասը տրվում և կոլտնտեսության սահմանադաշտում կետներում:

դ) Կերի ուսուրամները բաշխելիս, առաջին հերթ պետք և ապահովել մթերատու անասունների հանրահայցված մասը (մասնավանդ կոլտնտեսության ապրանքային ֆերմաները), ապա լծկանները. մնացած մարաշիվում և կոլտնտեսականների միջև նրանց աշխատանքի որերի թվի համաձայն, նկատի առնելով նրան ունեցած մթերատու անասունների քանակը:

յի) Կոլտնտեսությունները սերմացվի Փողով են կամ մում այնպիսի չափով, վոր նա ապահովի ցանքի տարածությունների պլանում նախատեսված ընդարձակումը, ընդ վորում կոլտնտեսության վարչության հատու վորոշումով, պետք և սահմանվի սերմացվի Փողով կամ մերու և պահպաններու այնպիսի կարգ, վորն յերաշխացորի նրա լավագույն վորակը:

զ) Կոլտնտեսականների մեծամասնության վոր շումով, կոլտնտեսության նոր անդամների աշխատացանքները հանրայնացվում են և նրանց մերժաւավակատարվում և կոլեկտիվ կերպով:

ե) Համատարած կոլեկտիվացման ըլքաններու կոլտնտեսության յեկամուտների 5 տոկոսայ հատկամուտներն առաջարկվում և ողոտակործել հետեւյալ ձևով՝ յերկու տոկոսը հատկացնել կոլտնտեսականների:

Կրանց համբայնացված գույքի չափի համաձայն, մեկ և կես տոկոսը հատկացնել կոլտնտեսության բրիգագիրների և հարվածայինների պարզեվատրման Փողին, մեկ և կես տոկոսը՝ զանազան դասընթացներում սովորող կոլտնտեսականների ողնության Փողին:

6. Կենտրոնական կոմիտեյի պլենումն առանձնապես մատնամշում է այն պատասխանատու խնդիրները, վորումով դրված են մեքենատրակտորային կայանների, վորակում վոչ միայն կոլտնտեսությունների տեխնիկական բազան, այլև նրանց ամերող տնտեսությունը կազմակերպողների առաջ: Այս տարի ամառը և աշնանը մեքենատրակտորային կայանները պետք են հերկեն 5 միլիոն հեկտար հող, անեն 8 միլիոն հեկտար աշխատացանքն, 15 միլիոն հեկտար աշխատավայր և միենույն ժամանակ միջնույներ ձեռք առնեն, վոր իրենց սպասարկած կոլտնտեսությունները պետության հանձնեն (վաճառեն) իրենց վոչ միայն հացարույսերի, այլև տեխնիկական մշակույթների, ապրանքային արտադրանքը: Կոլտնտեսությունների ապրանքային արտադրանքը հանձնումը դառնում և մեքենատրակտորային կայանների անմիջական արտադրական խնդիրը:

Մեքենատրակտորային կայանները, վորոնց միջոցով Խորհրդային Միության բանվոր գտակարգը տեխնիկապես վերադիմում և կոլտնտեսական գյուղաշիությունը, պետք և նույնպիսի հաջողությամբ կատարեն հացահատիկներն ու տեխնիկական մշակույթները հավաքելու և հանձնելու խնդիրները, վորով կատարեն և գերակատարեցին նրանք ցանքի առաջադրանքները:

7. Կենտրոնական կոմիտեյի պլենումը հրավիրում

և կուսակցական կազմակերպությունների ուշադրությունն այն հանդամանքի վրա, վոր հացահատիկային խորհանութեառությունների 4.200 հազար հեկտար տարածության բերքահավաքը և 160 միլիոն փութ ապրանքային արտադրանքի հանձնումը հանդիսանում և բերքահավաքի կամպանիայի կարելորագույն տնտեսական քաղաքական խնդիրներից մեկը։ Զերծորեն և հացահատիկային խորհանութեառությունները պետք է մեջոցեր ձեռք առնեն, վոր ընթացիկ տարում վոչ միայն բերքահավաքը կատարվի ժամանակին և նվազադույն կորուստներով, այլև ժամանակին հանձնվի ապրանքային հացահատիկը (առնվազն 70 տոկոսը մինչև նոյներեքի մեկը)։

8. Պակաս կարեւոր խնդիրներ չեն դրված նաև անասնաբուծական խորհանութեառությունների առաջ։ Արտադրական պլանի համաձայն, նրանք այս տարի պետք է հավաքն մոտ 350 միլիոն փութ խոտ, 100 միլիոն փութ հյութալի կեր և 35 միլ. փութ հացահատիկայի։ Փուրած։ Անասնաբուծական խորհանութեառություններում բերքահավաքի կամպանիան դժվարացավ թույլ մեջենայցման չնորհիվ, վորով անհրաժեշտ եր բերքահավաքի աշխատանքների մեծ մասը կատարել ձիով և յեղով։

Այդ հանդամանքն անասնաբուծական խորհանութեառությունների վրա պարտականություն և դնում՝ ամեն կերպ ապահովելով մեջնայցումը, մեծ ուշադրություն ուլիրել իրենց լծկաններով (ձի, յիղ, ուղոտ) ապահովելու գործին։

Կենտրոն առաջարկում ե կուսակցական կազմամտկերպություններին՝ աջակցություն ցույց տալ խոր-

տնտեսություններին լծկան և բանվորական ուժ, ինչպես և կերպ փոխադրելու համար և տեղական տրամադրությունը բեռք բերելու գործում։ Կենտրոնը պատասխանակալությունը և դնում չըկամների և չըկարծկումների վրա այդ աջակցությունը կազմակերպելու համար։

9. Անցյալ տարի առանձնապես մեծ է իրն կորուստները տեխնիկական մշակույթիների բերքահավաքի ժամանակի, չնորհիվ բերքահավաքի կամպանիայի վատ կաղմակերպած վիճակում և բերքահավաքի մեջենայցման կատարյալ բացակայության։ Այսպիսի պայմաններում, յերբ զգալի չափով ավելացել ե բուլոր տեխնիկական մշակույթիների պլանավային արտադրանքը և նոր միայն սկզբել ե բերքահավաքի ու նախնական մշակման մեջենայցումը, աշխատանքի հիմնական մասն այս տարի ևս կատարվելու յե ձեռքով և ձիու ինվենտարով։ Ուստի կենտրոնական կոմիտեի պլենումը հրավիրում է կուսակցական կազմակերպությունների, հոգային որդարների և կողոնտեսությունների ուշադրությունն այն հանդամանքի վրա, վոր անհրաժեշտ և

(ա) Մասնավոր ձևով կարգակերպել ամբողջ բերքահավաքի կամպանիան, հիմք ընդունելով կուտնահանական ամրող ազգաբնակության մասնակցությունը բերքահավաքին և գործավարձի խստիվ կիրառումը։

(բ) Ոգտագործել, մասնավորապես վուշի և կանեփի վերաբերմանը, նախնական մշակման գործարանների շարքին՝ կողոնտեսականների աշխատանքը թեթևացնելու ամենապարզ յեղանակներ։

(գ) Բերքահավաքը և արտադրությունը հանձնումը կատարել այն ժամկետներին և այն չափերով, վորոնք նախատեսված են կոնտրակտացիոն պայմանագրերում։

է) Փոխարեւէլ լրիվ և այն ժամկետներին, վորոնք նախատեսված են կենտրոնի և ժողովով խորհի դիմումի մեջ կանարակատացիայի մասին՝ անհրաժեշտ քանակությամբ հաց, արդյունաբերական ապրանքներ, յուլ, քուոզ և այլն:

Կենտրոնը մատնանշելով, վոր «Սարտղսահարի» խորհանությունների խորհին և՝ կազմակերպել 230 միլիոն փութ ճականդեղի բերքահավաքն ու հանձնումը զործարաններին և առնվազն 30 միլիոն փութ ապրանքային հացահատիկի հանձումը «Սարտղսլեբին», առաջարկում և Ռեգալիսայի կ(թ) Կ կենտրոնին ու Մարդկոմին անհրաժեշտ ողնություն ցույց տալ խորհանություններին այդ գործում:

Կենտրոն առաջարկում և կուսակցական և խորհրդային կազմակերպություններին միջոցներ ձեռք առնել ապահովելու անհատական տնտեսությունների բերքահավաքի կամպանիայի զեկավարումը, կապելով այդ հետ: Կենտրոն կուսկազմակերպությունների ուշադրությունն ե հրավիրում, վոր անհատ տնտեսությունների մեջ բավարար աշխատանքը չկատարելու շնորհիվ, մի շաբաթ չըջաններում նրանք յետ են մնում ցանքի առարիգում (մանավանդ վուշի, կանեփի և ծխախոտի ցանքի ասպարիզում):

10. Վարպետղի խորհրդային անտեսությունները և մեքենատրակտորային կայանները հաջող ու ամենաարդյունավետ կերպով կիրառեն բերքահավաքի կամպանիան, անհրաժեշտ և, վոր արդյունաբերությունը ժամանակին կատարի բերքահավաքի մեքենաների արտադրական պլանը:

Նկատի ունենալով այդ, ԺՏԳԽ պետք ե միջացներ ձեռք առնի, գյուղատնտեսական մեքենաներ արտադրող գործարանները հունիսին և հուլիսին ծածկեն նախորդ ամիսների պակաս արտադրած մեքենաների իրենց վարտքը: Կենտրոնական կոմիտեյի սլենումը առանձնապես «Կոմունար» գործարանի (կոմբայններ), Լյուբերցիկու գործարանի (խրձկապ մեքենաներ, խոտ հընձող մեքենաներ, գուղ մեքենաներ), կլիմովի և Առլովի կարլ Մարքսի անվան գործարանների (վուշի ու կանեփի նախական վերամշակման սարքավորում), Խոստովի «Սելմաշի» (խրձկապ և խոտհավաքի մեքենաներ), Խերսոնի, «Մայիսի 1-ի» գործարանի (բամբակի բերքահավաքի մեքենաներ), Նիկոլայեվի գործարանի (Ճականդեղի բերքահավաքի մեքենաներ), Գումեևի «Սելմաշի» (սիլոսահատ մեքենաներ), Ռյազանի գործարանի (կարտոֆիլի բերքահավաքի մեքենաներ), «Սերպուհովո» գործարանի (կալիխ մեքենաների) բանվորների, վարչական, տնտեսական և ինժեներատեխնիկական կազմի ուշադրությունն ե հրավիրում այն հանդամանքի վրա, վոր բերքահավաքի մեքենաները ժամանակին հանձնելը կուսակցության մարտական խորհին ե:

Դրա հետ միասին, պլենումն առաջարկում ե ԺՏԳԽ-ին՝ գյուղատնտեսական մեքենաշինության գործարանների 1932 թ. արտադրական ծրագրերի կազմումն անելը 1932 թ. արտադրական ծրագրերի կազմումն անելը անենառը մինչև 1931 թ. հուլիսի կեսը, նկատի առնելով, վոր անհրաժեշտ և առաջիկա տարում ե՛լ ավելի մեքենայացնելով հացարույսերի բերքահավաքն ու մշակումը, ապահովել բամբակի, վաշի և հակեղեղի բերքահավաքի տոնվազն 50 տոկոսով մեքենայացումը և բերքահավաքի տոնվազն 50 տոկոսով մեքենայացումը: 15

ՅԵՐԿԱՌՈՒԽԱՅԻՆ ՏՐԱՆՊՈՐՏԸ ՅԵՎ ՆՐԱ
ՀԵՐԹԱՎԱԾ ԽԵԴԻԲՆԵՐ
(ՀՃՃԿ ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ)

ՀԱՄ.Կ(բ)Կ-ի ԿԿ-ի ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱԳԵՎԸ ԸՆԿ.
ՌՈՒԽԱՅՄՈՎՀԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ՅԵՎ ԱՆԴՐԵՅԵՎԻ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՄԱՆ ՍՈԹԻՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ
ՀՈՒԽՈՒՄԻ 15-ԻՆ

1. Յերկրի ինուստրացման հաջող իրականացու-
մը, արդյունաբերության բոլոր ճյուղերի արագ զար-
գացուքը, նոր հսկա գործարանների և վիթխարի կոմ-
ինաստների շինարարությունը, գյուղատնտեսության
արածուն վերելքը՝ նրա կողեկտիվացման հիման
վրա, խորհանությունների շինարարությունը, մե-
ծահարուստ հանքեր ունեցող նոր շրջանների բուռն ա-
ճումը, ծայրերկերի ներդրագումը յերկրի տնտեսա-
կան կյանքի մեջ, այս բոլորը կանխորոշում ե յերկա-
թուղային տրանսպորտի աշխատանքների հսկայական
աճումը, քանի վոր նա կազմում ե սոցիալիստական ին-
դուստրացման անխօնի որդանական մասը:

Հնդամյակի առաջին յերկու տարում ԽՍՀՄ-ում
յերկաթուղային բևոների շրջանառությունը 1929
տարվա 156 միլիոն տոննից, 1930 տարում հասավ 238
միլիոն տոննի՝ հանդեպ 1913 թվականի 132 միլիոն


տոննի; և այդպիսով գերազանցեց մինչըլատերագմյան
մակարդակը՝ 80 տոկոսով:

Միաժամանակ բուռն թափով ավելանում են մարդ-
կանց փոխադրումները: Անցյալ 1930 թվականին յեր-
կաթուղային տրանսպորտը փոխադրել է 557 միլիոն
Հոդ՝ 1928 թվականի 291 միլիոն հոդու փոխադրեն, և
1913 թվականի 185 միլիոն հոդու փոխադրեն:

Բևոների փոխադրության ասպարիզում ԽՍՀՄ-ի
յերկաթուղային տրանսպորտը գրավեց յերկրորդ տեղը,
Հ. Ա. Միացյալ Նահանգներից հետո: 1930 թվականին
ԽՍՀՄ-ի յերկաթուղայիները կատարեցին 133 միլիարդ
տոնն-կիլոմետր աշխատանք, հանդեպ Գերմանիայի 61
միլիարդ տոնն-կիլոմետրի, Անդիսայի՝ 29-2 միլիարդ
տոնն կիլոմետրի, և ՀԱ-Միացյալ Նահանգների՝ 565
միլիարդ տոնն կիլոմետրի:

Համեմատաբար աննշան յերկաթուղային նոր շե-
նարարության մեջ փոխադրումների այն աճումը մեծ
չափով ուժեղացրեց մեր յերկաթուղայիների առրանցա-
լարվածությունը: Արդեն 1930 թվականին ԽՍՀՄ-ի
յերկաթուղայիների ապրանքալարվածությունը մի կիլո-
մետրին ընկնում եր 1738 հազար տոնն կիլոմետր ապ-
րանքալարվածություն՝ հանդեպ ՀԱ Միացյալ Նա-
հանգների յերկաթուղային ցանցի 1.068 հազար տոնն
կիլոմետրի:

Այսպիսով ԽՍՀՄ-ի յերկաթուղային տրանսպորտի
ընդհանուր աշխատանքը (բևոների և մարդկանց փո-
խադրությունը) 1930 թվականին հասավ 185 միլիարդ
տոնն կիլոմետրի, վոր յերկու անդամ ավելի յե քան
1913 թվականի մակարդակը՝ ՀԱ Միացյալ Նահանգների պա-
տության մակարդակը՝ 1738 կիլոմետրության մասունքով:



կաս և հնդամյա պլանում 1932—33 տարվաւ համար համատեսվածից :

Մինչդեռ 1931 թվականին համաշխարհային ճըղանաժամի խորացումը շարունակ նվազեցնում է կապիտալիստական յերկրներում յերկաթուղային տրանսպորտի աշխատանքը, ԽՍՀՄ-ի յերկաթուղային փոխադրումներն աճընդհատ աճում են և աշխատանքի բնադրավառում արդեն 1931 թվականին հնդամյակը գերակատարվելու յի:

2. Յերկաթուղային տրանսպորտի աշխատանքի աճումը հիմնված է նրա նյութական-տեխնիկական բաղայի մեծացման, ինչպես և մանավանդ՝ յերկաթուղային տրանսպորտի ռեսուրսների ողտադրժման բարելավման վրա:

Յերկրի շողեշարժային պարկի ընդհանուր քարշի ուժը 1913-ից մինչև 1930 թ. աճել է 30 տոկ. շողեշարժի միջին քաշող ուժը 1913 թ. 8,4 տոննից բարձրացել է 11 տ. 1930 թ. վագոնային պարկի ընդհանուր քենունակությունը ավելացել է նույնական 30 տոկոսով:

Զդալի չափով ավելացել է յերկաթուղային փոխադրանան ռենակությունը նոր կիսակայարանների բացման և կայտանների ու հանգույցների լայնացման հաշվին:

Խորհրդային հշիանություն դոյության ընթացքում կառուցված և և շահագործման և տրված մինչև 1930 թ. 12,8 հազար կիլ. նոր յերկաթուղայիններ (Տուրկակ, Բորովյակ-Ակմոլինսկ-Կարգանդա, Տրոյիցի-Ռուսկ, Միրեֆանսկուն և այլն):

Նյութական բազայի այս լայնացման զուգընթաց

դպավիորեն աճել է տրանսպորտի աշխատանքի վորակական ցուցանիշները: Ապրանքատար վագոնի միջին որական վազքը 1930 թ. կազմում էր 93,4 կիլոմետր՝ 1913 թ. 72 կիլ. գիմաց, ապրանքատար շումելարժի վակեց 153 կիլ. 1913 թ. 119 կիլ. գիմաց:

Հաղթահարելով յերկաթուղային տրանսպորտի բյուրովը ըստական-քարտացած հին ապարատի ընդդիմությունը, համառ կոիլ մղելով վնասարարների գեմ, իր շարքերից զեկավարների նոր շարքը առաջ քաշելով, յերկաթուղային պրոլետարիատը՝ չնայած համաշխարհային պատերազմի և ինտերվենցիայի կործանիչ հետեւլանքներին, զգալի հաջողություններ ձեռք բերեց, հաստատելով պլանային-սոցիալիստական անտեսության հսկայական առավելությունը կապիտալիստականի համեմատությամբ:

3. Սակայն, չնայած յերկաթուղային տրանսպորտի աշխատանքի անվիճելի հաջաղություններին, նրա աճման տեմպերը չեն համապատասխանում սոցիալիստական շինարարության ծավալման տեմպերին, վորի հետեւանքով տրանսպորտը գարձել է «նեղ տեղ» ժողովրդական անտեսության մեջ:

Մի կողմից յետամնացությունը յերկաթուղային տրանսպորտի տեխնիկական վերասարգավորման մեջ, նրա հիմնական կապիտալի զգալի մաշվածությունը, վնասարարությունը, վորը մեծ չափեր ստացավ անցած տարիներում, ինչ մյուս կողմից՝ տրանսպորտի կառավարման սիստեմի կազմակերպչության խոչընթերությունները և գլխավորապես՝ համապատասխան տեխնիկական բազայի բացայի բացակայության պայմաններում կիրառված «դիմագրկված» յերթի սիստեմը և դիմա-

զբկության մուծումը տրանսպորտային տնտեսության այլ ճյուղերում—ռուսացան այն հետևանքը, վոր վատացավ շողեշարժային պարկի դրությունը, խիստ բնկալ աշխատանքային դիսցիպլինան, իջավ աշխատանքի արտադրողականությունն և առհասարակ զգայի վատացավ արանսպորտի աշխատանքը 1930 թ. յերկրորդ կիում և 1931 թ. առաջին յեռամսյակում:

4. Կուսակցության կենտրոնական կոմիտեն ժամանակին յերկիլիքացիայի յենթարկեց ամրող կուսակցության ուշադրությունը արանսպորտի հարցերի շուրջը և նշեց յերկաթուղային տնտեսությունը առողջացնելու դիմավոր միջոցառումները:

Կուսակցության կենտրոնի և Ժողկոմիորչի վորշման հիման վրա՝ վեմաղրեկված յերթելեկության վերացումը և փոխարինումը զուգակցված յերթով, յերկաթուղային արանսպորտի կառավարման վերակաղմակերպումը, վորակյալ կաղրերի վերադարձը արանսպորտի վրա, յերկաթուղային տնտեսության վճռական ողակների աշխատողների աշխատավարձի բարձրացումը—արդեն ամեն իրենց արդյունքները:

Կուսակցության այդ կարենուաղույն դիրեկտիվի իրագործումը ունեցավ այն հետևանքը, վոր վոչ միայն լավացավ շողեշարժային պարկի վիճակը, այլ և դրամուրեն առողջացավ յերկաթուղային անուեսությունը:

5. Զայած յերկաթուղային տնտեսության առողջացման գործում կատարված բեկմանը, այդ բեկման հիմնական դրծոնների ամրապնդումը պետք է համարել անբավարար:

Տարժական կազմի նորոգումը և նրա աեխնիկական և կողմանական ընդհանուր առմանը քենուս կոհացու-

ցիչ չեն: Բրիգադների կցումը չողեշարժներին՝ բավականաչափ ամուր չեն, հաճախ տեղի յին ունենում կրցված բրիգադների խանդարումները:

Զավագանց անբավարար և գրաված յերթեկության կարևորումը հձմելի և վարչությունների կողմից, շխսվելերական ապարատի վրա աշխատանքը, յերթեկության առաջադրված դրաֆիկների և չափիչների թերակատարումը, «գեղագերի» զգայի թիվը և կայտաների վատ աշխատանքը, վարչունների յերկարացուել պարագուրդները, գնացքների հաճախակի վիրացումը,—այս ամենը պակասեցնում են վրակական ցուցանիշները և խողիքը և զնում համար պայքար մղելու նրանց հաղթահարման համար:

I. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՎԵՐԱԿԱՌՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Փոխադրումների հոկայական աճումն անցած տարիներում, բեռնաշրջանառության հետազա զգալի աճման հեռանկարները՝ սոցիալիստական շինարարության բույն ծավարման հետևանքով՝ սահմանական արևատապես վերակառուցել յերկաթուղային արանսպորտը:

Այդ վերակառուցման տեմպերի արագացումը թերագովում և այն վաստով, վոր տրանսպորտի նյութական-տեխնիկական բազան խիստ հետև և մնում ժողովրդական տնտեսության պահանջներից:

2. Հավանություն տալով կենտրոնի ֆաղբյուրույի 1931 թ. մայիսի 25-ի վորոշմանը՝ յերկաթուղային արանսպորտի վերակառուցման մասին, պլենումը վորոշում և հաստատել Հաղորդակցության ձանադարձների ֆողկոմատի հիմնական դրույթները յերկաթու-

դային տրանսպորտի վերակառուցման ասպարիզում՝ հետեւյալ ուղղությամբ, յերկաթուղիների երեխորիֆիկացումը, ուժեղ չարժական կաղմ (շղեշարժեր, եղեկ-տրաշարժեր և ջերմաշարժեր), 50-60 տոննանոց վագոններ, ինքնակցում, ինքնարբելակում, ինքնարբում, գծի արտաքին մասի վերակառուցում, քարշային սարքի վերասարքավորում, ջրամատակարարում, բեռնելու և դատարկելու աշխատանքների մեջնայտում:

Ենոնաշրջանառության աճման համապատասխան՝ անհրաժեշտ և վերակառուցման հիշյալ տարրերը առաջին հերթին մացնել ամենածանրաբեռնված դժեռում:

3. Հաստատել ՀՃՖԿ-ի կողմից առաջարկված նայած բեռնաբարձությանը ճանապարհի վերակառուցման յենթակա յերկաթուղարձերի բաշխումը յերեք խմբի՝

ա) Առաջին տիպի գծերի վերակառուցումը, վորուել թույլատրվում են առանցքին 23 տոնն վերջնող չողեշարժեր, կատարել 1932-1933 թ. ընթացքում հետեւյալ ուղղություններով — Կուզնեցկ-Չելյաբինսկ, Չելյաբինսկ-Մագնիստայա, Յասինովատայս-Դոլգինեցի, Յասինովատայա-Յենակիյեվո-Մակիյեվսկի ուայոն, Գրոզնի-Արմավիր, Կուրդան-Յվերդովսկ, Վալույի-Լիսիկս-Բալաշով-Պենջա, Վյուտկա-Բույ-Լիսին-դրագ, Պրոխաչանայա-Բենլան:

բ) Յերկրորդ տիպի գծերի վերակառուցումը, վորուել թույլատրվում են եղին չողեշարժերն առանցքին 20 տոնն բեռով, կատարել 1932-1933 թ. Կինել-Ռին-բուրդ-կաղալինսկ — Ուրսուտյեվսկայա գծում:

գ) Յերրորդ խմբակի մեջ մացնել մյաւս բոլոր գըծերը, վորոնց ճանապարհային տնտեսության ուժեղացումը պետք է հանդիսանա տեխնիկական վերադիման ամենապիսավոր խորհրդներից մեկը:

Ամենաուշը յերկու ամսվա ընթացքում ըննել Մուրմանի յերկաթուղու վոխագրական ունակությունն ուժեղացնելու հարցը:

4. Ընդունել, վոր յերկաթուղային տրանսպորտի վերակառուցման առաջատար ովակը, վորպես հեռանկար, հանդիսանում է յերկաթուղիների եյեկորիփիկացիան: 1932—33 տարիների ընթացքում ելեկտրիֆիկացիան պետք է կիրառվի ընդհանուր առմամբ 3690 կիլոմետր յերկարություն ունեցող յերկաթաղըծում: Գրանից բնոնատար յերթելեկության համար երեկութիփիկացիայի յենթարկել Յ. 215 կիլոմետր յերկաթաղիծ, վորն ընթանալու յի հետեւյալ ուղղություններով:

1) Պերմի յերկաթուղին-Կիրել-Զուսովսյու-Լալին, Զուսովսյա-Նիմինի Տաղիլ, Նիմինի Տաղիլ-Սլերկովսկ, Մազնիտոգորսկ-Ռովա, Մազնիտոգորսկ-Լիպտալում:

2) Տոմսկի յերկաթուղին՝ Ռուսիատի-Բելովս-Պոլիսայեվո, Տոպկիլ-Կեմերեվովո, Ռուսիատի-Կուզնեցիկ, Տոպկիլ-Կուզույեվո-Պոլիսայեվո, Անժերկա-Կամերեվո:

3) Յեկատերինյան յերկաթուղի՝ Դոլցինյեվո-Զապորժիե, Զազորոժիե-Զապլինո, Յասինովատայա-Զապլինո:

4) Հարավային յերկաթուղի՝ Լիման-Ռոսովո, Դեբալցովո-Զվերեվիո:

5) Հարավ-արևելյան յերկաթուղի՝ Միխայա-
Ստալինցը առ:

6) Մոսկվա-Կուրսկ յերկաթուղին՝ Մոսկվա-Ռժե-
լիլին-Վոլխովու:

7) Անգրկովկասյան յերկաթուղին՝ Ստալինսկ-
Զեստաֆոնի, Նավթլուղ-Ստալինսկ, Զեստաֆոնի-
Սամարեղի, Նավթլուղ-Սպասաֆա:

Մարդաբար յերթենկության համար ելեկտրիֆի-
կացիայի յեն յենթարկվելու ամենից ավելի մարդկային
մեջ յերթենկություն ունեցող դժերը ընդհանուր առ-
մամբ 475 կիլոմետր յերկարությամբ:

Պլնումն ընդգծում և յերկաթուղիների ելեկտրի-
ֆիկացիայի ժողովրդական-անսեսական հատուկ նշա-
նակությունը և առաջարկում և ժջիշ-ին միջոցներ
ձեռք առնել լրիվ կերպով ծավալելու համայատասխան
արդյունաբերությունն այդ պլանը լրիվ կատարելու
համար:

5. Անհրաժեշտ համարելով ջուր չունեցող դժերում
մտցնել ջերմաստարենը, հավանություն տալ 1932-1933
տարվա ընթացքում Կրասնովուսկ-Չարչույ, Սալոկ-
Բատայսկ, Ստալինգրադ-Տիխոբեցկայա դժերը փո-
խազել ջերմաստար քարշի:

2. ՅԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՆՈՐ ՇԻՆԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Մի շարք խոշորագույն արդյունաբերական կոմ-
բինատների ստեղծումը, Աւրայ-Կուզնեցի պլուրեմը,
Միջին-Ասիայի կասպակցումը Սիբիրի հետ, Ղաղախը-
տանի և յերկրի կենտրոնների միացման պրոյեկտը,
ծայրերերի ինդուստրացումը, անտառների շահա-
գործման զգալի չափով ծավալումը և հյուսիսային

ըջանների անտառների յուրացումը, հզոր խորհրդա-
յին ու կոլեկտիվ տնտեսությունների շինարարությու-
նը, յերկրի պաշտպանումակության հետազա ուժե-
ղացման անհրաժեշտությունը—այս բոլորը յերկաթու-
ղային տրանսպորտի առաջ դնում և հսկայական խըն-
դիր, այն և զարկ տալ նոր յերկաթուղիների շինարա-
րությանը, ուժեղացնել կոյություն ունեցող յերկա-
թուղիների փոխադրական ունակությունը:

2. Մինչեւ նոր յերկաթուղիների աշխատանքի
տեմպը և այդ յերկաթաղծերը շահագործման համար
հանձնելու տեմպը, յետ են մնում պլանում նախագծե-
վածից: Մինչև այժմ կան մի շարք խոշորագույն թե-
րություններ (աշխատանքի պլաններ փոխվում են հա-
ճախակի, հետազոտումների անբավարար վօրակը,
թույլ մեքենայացում, ինքնարժեկի թանգացում, նոր
յերկաթուղիների անվատրաստ լինելը շահագործման
համար, նրանց համար կազմերի անբավարար պատ-
րաստումը և այլն), վորով աշարժյուն պառկած են
մնում Հիմնական ներդրումները, ձգձգվում և շինարա-
րությունը և թանգանում են նրա ինքնարժեկը:

Պլնումն անհրաժեշտ համարելով վճռաբար ավե-
լացնել յերկաթուղային նոր շինարարության շահա-
գործման արդյունավետությունը, մինույն ժամանակ
առաջարկում և զաղորդակցութան ձանարարհների
փողկոմատին՝

1) Իրական բեկում ստեղծել տրանսպորտի հիմնա-
կան աշխատանքների կազմակերպումը բարելավելու
դործում, շինարարության պրոցեսների մեքենայացման,
աշխատանքի պլեյֆ լավ կազմակերպման, կաղըրերի

պատրաստման ընդարձակման և շինալրարական ըստ
տորին ողակների զեկավարման առաջարիգում :

2) Առավելագույն չափով ընդարձակել տեղական
հութությային ռեսուրսների ոգտագործման ոժանդակ
տնտեսական ձևնարկությունները :

3) ԽՍՀՄ-ի ԺՏԳՄ-ի հետ միասին ամենառաջը մին-
չել Հուլիսի 15-ը մշակել յերկաթուղային նոր շինա-
րարության համար անհրաժեշտ մեքենաների պատ-
րաստման (եքսկավատորներ, կոմպլեսորներ, ջրհան-
գործիքներ, քարհաններ և այլն) ոլատվաստման պլա-
նը:

4) Առաջարկել ԽՍՀՄ-ի ժողկոմիսորհին յերեք
ամսվա ընթացքում կազմել այն յերկաթուղային նոր
շինարարությունների հաստատուն ցուցակը, վորոնք
անուրիման կառուցվելու յն 1932 թվականին:

3. ԱՇԽԱՆ ՅԵՎ ԶՄԵՐՎԱ ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մատնանշելով, վոր միանդամայն անբավարար և
ծախըլում յերկաթուղային արանապորտի նախագամա-
րաստումն աշնան և ձմեռախ կորսությունների հո-
մար (կայարանների, հանգույցների, և կիսակայարան-
ների զարգացումը, պլոտինների հարթումը, յերկա-
թուղիների նորոգումը, ջրի մատակարարումը, ռելու-
սի, ռելունկաների և շարժական կաղմի ջուր մատակա-
րարելու խորովակների ու սարքավորման անբավարար
մատակարարումը) Կենակոմի պլինումը տնտեսական,
կուսակցական և արհմիութենական կազմակերպու-
թյունների կարելորագույն խնդիրն և համարում յեր-
կաթողու նախագամարաստումն աշնան և ձմեռախ կո-

խաղրությունների համար՝ զուգակցված յերթեկնեկու-
թյան վճռական ամբացման հիման վրա :

Կե-ի պլենումն առաջարկում ե՝

Ա. Քարշի տնտեսության ապահովում

ա) Լրիվ իրագործել չողեկառքերի ու վաղոնների
առողջացման ու նորոգման պլանը, վճռաբար նվազե-
ցնել հիվանդ չողեկառքերի թիվը, սահմանելով այդ
պլանի կատարման սիստեմատիկ ստուդումը :

բ) Ապահովել հստակ աշխատանքը զեկոյում, վորը
կազմում ե յերկաթուղային այսանսպորտի հիմնական
արտադրական ողակը, նորոգման վորակապես լավա-
գույն կազմակերպման և ամենառաջիննալ ողատարծ-
ման մասը :

գ) Ժամանակին կառուցել և զարգացնել հիմնական
և թիթե նորոգման զեկոնները, բարձրացնել զեկոնե-
րի նորոգման վորակը, միաժամանակ բարելավելով
չողեկառքերի խնամքը, չողեկառքային բրիդաղների
կործեց : Կարգի բերել գոյություն ունեցող զեկոնե-
րը, բարելավելով նրանց կազմակերպությունը, վիճա-
կը, սարքավորումը, ջեռուցումը, լուսավորությունը
և այլն :

դ) Ուժեղացնել գլխավոր մագիստրալների հիմնա-
կան զեկոնների նորոգման միջոցները (Դրոնքաս, Ու-
րալ-կուղնեցկի կոմբինատ, Սիրիո) պայահովելով զե-
րանք անհրաժեշտ բանուժով և բնժեններա-տեխնիկա-
կան կաղըրերով :

յե) Մատնանշելով, վոր հաղորդակցության ճանա-
պարհների ժողկոմանը և յերկաթուղայինների վարչու-
թյունները բավարար չափով չեն զեկավարում ո-
տաքերկը ափորձի ու տեխնիկայի ողագործումը յեր-

կաթուղիներում, վոր այդ փորձն ու տեխնիկան բնավ չեն կերառվում գեղոցի տնտեսության շահագործման ու կազմակերպման և շարժական կազմի նորոգման առաջարիդում, պլենումն առաջարկում և Հաղորդակցության ձանագարհների ժողովագումատին ամենամուտ ժամանակով առաջարկում առաջարկության տեխնամուտ ժամանակում առաջարկության տեխնիկայի համապատասխան ոգտագործումը:

Բ. Յերքեվեկության առաջիկում.

ա) Վճռական միջոցներ ձեռք առնել մարդուարդացքների ու չափումների գեմ և հետևին, վոր առանձատար գնացքները յերթեվնեկն բայ չփացուցակի:

բ) Միջոցներ ձեռք առնել բարձրացնելու յերթեվեկության ապարատի և կայտարների աշխատողների վարակալորումը և բարելավելու նրանց դրությունը:

գ) Պարտավորեցնել Հաղորդակցության ձանապարհների ժողովագումատին կերառելու կազմող ըրիզաղների ամրացումը պարկերին, յերթեվեկող կազմի հերթակիություններին, դիսպաշչելների ամրացումը ուղղություններին և այլն:

դ) Ամառվա ընթացքում սացիոնալացնել և բարելավել աշխատանքը տեսակալորդ բաշխիչ և միջանկային կայտարներում:

յ) Անան և ձմեռվա փոխակերությունների բնագավառում ավարտել և ուժեղացնել գետպետչներին և մնդանուր կապը զնուցքների յերթեվեկությունը և կայտարների աշխատանքը սպասարկելու ու դեկալարելու համար, հառուկ ուշադրություն դարձնելով, վոր կազմով լրիվ առաջովիմած մինեն բեռների փոխադրությանց մեծ աշխատանք կատարող շրջանները (Դոնիաս, Արարատ, Սիրիք և այլն):

զ) Պատշաճ չափով ծավալել վագոնները բեռնելու և պարզելու աշխատանքների մեջենայցումը նախ և առաջ խոչըրադրույն հանդույցներում Դոնիասի, Ռեբալի, Մուկվացի և Լենինգրադի հանդույցների բաշխիչ կայտարաններում:

ե) Աննորմալ համարելով ներկայացնեմ զոյություն ունեցող այն դրությունը, յերբ չողեկառքերն ու վագոններն աշխատում են ընդամենը արտադրական աշխատանքային որվա 30 տոկոսի չափով, պարտավորեցնել Հաղորդակցության ձանապարհների ժողովագումատին, ձեռք առնել մի շարք միջոցներ արմատացնելու չողեկառքերի յերթեվեկության ամենառացիոնալ գրաֆիկներ, իջեցնելու չողեկառքերի կանգառումը, ջուր վերցնելու, վառելանցությ վերցնելու և նորոգելու համար, նվազեցնելու վագոնների պարապուրդը կայտարաններում, բեռ վերցնելու կամ պարուելու համար և այլն:

Գ. Փոխադրական ուսակությունն ուժեղացնելու բնագավառում:

1. Առաջարկել Հաղորդակցության ձանապարհների ժողովագումատին միջոցներ ձեռք առնել ուժեղացնելու յերկաթուղիների փոխադրական ունակությունը, համաձայն կենտկոմի մայիսի 25-ի վրոշման և կառավարության հաստատած ժամկետների, արագացնելով այդ աշխատանքն ամենամեծ յերթեվեկություն ունեցող յերկաթուղիներում, յերկրորդ դժերի կառուցման կիսակայտանների շինարարության, կայտարանների և հանդույցների փոխադրական ունակության ընդարձակման, քարշի սարքավորման կառուցման և այլն, վոր-

պեսզի այդ աշխատանքներն ավարտվեն ամենառուը մինչև հոկտեմբերի մեկը:

2. Գծերում ուղարկը փոխելիս ծանր ուղարկը կենտրոնացնել ամենից ավելի ապրանքալարվածություն ունեցող գծերում և մեջ լուր մեջ դանազան տիպի ուղարկը չընել այդ գծերում:

3. Կաղմակերպել ճանապարհի վերի շերտի ավելի մեծ խամք, բարելավել ճանապարհների վերահսկողության կաղըրի ընտրությունը, մատակարարել նրանց անհրաժեշտ գործիքներ և նյութեր և ապահովել ճանապարհի կանոնավոր սլահապահումը:

4. ԶԲԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԱՍԹԱՐԻՉՈՒՄ

Յերկաթուղային տրանսպորտի անխափան աշխատանքի համար հատուկ նշանակություն ունի ջրի մատակարարությը, վորը չորչիվ յերկաթուղային կաղմակերպությունների ծայրահեղորեն անուշաղիր վերաբերմունքի, տեխնիկական բավականաչափ միջոցների բացակայության, խողովակների և սարքավորման միանդամայն անբավարար դրության հանդիսանում և յերկաթուղային տնտեսության ամենանբարեհաջող բնակավառներից մեկը:

ա) Ճիշտ համարելով ջրի մատակարարման աշխատանքի կենտրոնացումը նախ և առաջ Դոնբասի, Ռուսկությունում կոմբինատի և թուրքաստան - Սիրիի յերկաթուղիներում կենտրոնի պլենումն առաջարկում և Հայուրդակցության ճանապարհների ժողկոմատին վերահսկությունը հաստատել ջրի մատակարարման աշխատանքների կատարման վրա, ձեռք առնելով բոլոր մի-

ջոցները այդ աշխատանքները մինչև աշնան ու ձմռվա փոխադրումները ավարտելու համար:

բ) Մատնանշելով խողովակների, ֆուսոնի մասերի, վրահանների, կաթսանների և ջրի մատակարարման համար անհրաժեշտ սարքավորման այլ տարրերի միանդամայն անբավարար արտադրությունը, կենակութիպի պլենումն առաջարկում և ԺՏԳԽ-ին միջոցներ ձեռք առնել, մատակարարելու տրանսպորտին ընթացիկ տարում 46,3 հազար տոնն ջրի թուջի խողովակներ և լրիվ կատարելու ջրի մատակարարման վերաբերյալ սարքավորման, պլանով նախատեսված բոլոր սպառվիրները:

5. ՆՅՈՒԹԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՀԱՅԹԱՑԹՈՒՄԸ ՅԵՐԿԱՐՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻՆ

Անբավարար համարելով շարժական կաղմի քանակը և ճանապարհային տնտեսության անբավարար վիճակը (ուղարկին տնտեսության տեխնիկական ցածր մակարդակը, ուղարկանների անբավարար քանակը, բարակատի վատ վիճակը) գորի պատճառն և նյութուկան

և տեխնիկական առարկաների անբավարար հայլայթումը տրանսպորտին, կենտրոնի պլենումն ընդդեկույթուղային տրանսպորտի հսկայական նշանակությունը ժողովրդական տնտեսության և յերկրի պաշտպանության ասպարիզում, առաջարկում և ԽՍՀ-ի ԺՏԳԽ-ին՝

ա) Բարձրացնել տրանսպորտին նյութական և տեխնիկական առարկաներ հայլայթելու գործի ֆուկարգակը, համաձայն նախագծված պլանների, արմատապես

բարելավել տրանսպորտին մատակարարվող արտադրանքի վորակը:

բ) Վորակս առանձնապես պատասխանառու խընդիքը, անհավաղ ընդարձակել տրանսպորտի մատակարարման հետ կազմած արտադրությունները, հավասարեցնելով վերջններս հարգածային շինարարություններին՝ թե արտադրության և թե հիմնական աշխատանքների բնադրավառում և ապահովել տրանսպորտի պատվերների ժամանակին կատարումը, համաձայն աշխան և ձմեռվա փոխադրությունների համար տրանսպորտի տեսած պատրաստություններին:

գ) Միջոցներ ձեռք առնել, վոր լրիվ կատարվեն ընթացիկ տարրում շարժական կազմի պատվերները, այն և՝ 1038 չորեցարժերից 47.400, առվաճապատար գաղոնների և ցիտուրների (հաշված վորագետ յերկառանցք) և 1467 մարդատար վաղոնների պատվերների լրիվ կատարումը:

դ) Մատակարարել տրանսպորտին 597 հազար տոնն ունը և լրիվ կատարել ուսի ամբացման սլաքի և այլ մասների պատվերները:

յե) Լրիվ և ժամանակին կատարել չորեկառքերի վաղոնների պահեստի պատվերները:

դ) Ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները ընթացիկ տարրում վերացնելու տրանսպորտին մատակարարվող արտադրանքի բոլոր վորական թերությունները, մանականդ ուելսերի և բանդաժների վերաբերմանը, ուժեղացնել տեխնիկական վերահսկողության աշխատանքը, մետաղածությունը գործարանների և արտադրանների ելեկտրական ու գաղացին դոդումն և այլն):

թիաների աշխատանքը, ոգտադործելով ուսարերկրյա տեխնիկական փորձը:

ե) Ալահովել յերկաթուղային տրանսպորտն անհրաժեշտ նյութերով և ապարատներով, ամենալայն չափով կիրառելու զաղացին ու ելեկտրական ձուլումը զողման ժամանակ:

ը) Բնիթացիկ տարրում յերկաթուղային տրանսպորտին հայթայթել 22 միլիոն ունակալ:

թ) Ռելսակալ կարող գործարաններն ընդարձակելու և նորերը կառուցելու համար կազմակերպել անհրաժեշտ սարքավորման արտադրությունը:

ժ) Զենոարկել այդ նոր զարժարանների սարքավորման արտադրությանը:

Կենտկոմի պլենումն առաջակաւմ է Հադորիկակցության ձևանակարգների ֆողկոմատին վճռական պայքար մկել տրանսպորտում մետաղի վատնման դեմ և հանձնարարում և Հայորդակցության ձանապարհների ֆողկոմատին, մշտիկի և կենացործել մետաղի խնայողությանը նախառող մի շարք գործնական ձեռնարկումներ (մշտիման ժամանակ մետաղի կորուսոր նվազեցնելու, լնողարձակել ուսիլիկացիոն ցեխերը, մետաղը փոխարինել պակաս գեֆիցիտային նյութներով, ըսյն արտադրանը ելեկտրական ու գաղացին դոդումն և այլն):

6. ԴՐՈԳԱՅԻՆ ԴՐՈՇԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ («ՎՈՐՉ») ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆԱԳԱՎԱԾՈՒԻՄ

Մատնանշելով, «Վորչ»-ի գործարաններում նորոգման գործի անհրաժարար կազմակերպվածությունը, չորեկառքերի նորոգման վատ վորակը, կենտկոմի ղե-

բեկուի վների չփառարենը գործարաններում՝ հունիսից սկսած անտեսական հաշվարկ մտցնելու մասին, ուսարերերյան փորձի անբավարար ուստաղործումը, կենտկոմի պլենումն առաջարկում և Հաղորդակցության ձանապարհների ժողկոկմատին.

ա) Ամենակարճ ժամանակամիջոցում կատարել կառավարության և կուսակցության վորոշումը «Վորդի»-ի գործարաններում շոգեկառքերի նորոգման վորակը բարելավելու մասին, լայն ոռաջարձում ուսարերկրյա փորձառությունը նորոգման գործում, իջեցնել նորոգման ինքնարժեքը և պարագուրզները:

բ) Արագացնել գործարանների ծրագրված մերակառուցումը՝ նորոգման գործում ուսարերկրյա ունիկայի ձեռք բերած նվաճումների հիման վրա, նախ և առաջ ապահովելով բեռների փոքր շրջանառություն ունեցող ըրջաններին սպասարկող գործարանները:

դ) 1931 թվականի ընթացքում կադրել «Վորդի» գործարանների վերակառուցման և նոր գործարանների շինարարության պլաններ (նախ և առաջ ներառում, Սբերիում և Հեռավոր Արեվելքում)՝ այնպիսի հաշվով, վոր 1932 թվին հնարավոր լինի ձեռնարկել թե գոյություն ունեցող գործարանների վերակառուցման և թե նորերի կառուցմանը:

դ) Պարտավորեցնել Հաղորդակցության ձանապարհ. Ժողկոմատին հատուկ վերահեռողություն սահմանել, վոր «Վորդի» գործարանների վրա, արանուպորտին պահեստի մասեր և սարքավորում մատակրարելու այն պատվիրների բնադրավառում, վորոնք նախատեսված են պլանում 1931 թվականի համար:

Տրանսպորտի առաջ գրած հսկայական ինդիբների լուծումը հնարավոր և միայն այն պայմանով, վոր

վճռականապես հաղթահարվեն անշարժությունը և բյուրոկրատիզմը տրանսպորտային կազմակերպությունների աշխատանքում, պայմանով վոր տեղական կուսակցական և արհմիութենական կազմակերպությունները ել ավելի մոտենան տրանսպորտի պահանջներին և կարիքներին, յերկաթուղային տրանսպորտի տնտեսական կազմակերպությունները ել ավելի շաղապավեն շրջանների տնտեսական զարգացման ընդհանուր խնդիրների հետ:

Նկատի ունենալով, վոր տնտեսական հաշվարկ մտցնելու համար անհրաժեշտ և անհապաղ և վճռարար բարեկալի հաշվառումն ու հաշվապահությունը արդանապորտում կկ-ի պլենումն առաջարկում և Հաղորդակցության ձանապարհների ժողկոմատին ամենակարճ ժամանակամիջոցում պատշաճ ձեվով կազմակերպել այդ բնադրավառները:

Դ. ՓՈԽԱԳՐՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆՎՈՐՈՒՄԸ ՑԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՓՈԽԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԼԻԵՆՏՆԵՐԻ ՀԵՏ

Կկ-ի պլենումն բացարձակապես անթույլատրելի յե համարում տրանսպորտի փոխադրամական միջոցների վոչ ուղիղնալ ուստագործումը տնտեսական ու կոռպերատիվ կազմակերպությունների կողմից՝ հանդիպական փոխադրումներ, վագոնների ժամանակին չքեռնիչն ու շալարպելը, վոչ իրական հայտեր և զրա չնորէիլ շարժական կազմի չողապարծելը բեռների համար, մասնական բեռները փոխադրելու համար ամառվա առմենանպաստավոր ժամանակը չողապարծելը (հանք,

վառելանյութ, հումույթ և արդյունաբերական ապրանքներ) :

ա) Կե-ի պլանումը հավանություն և տալիս ժողովուրչի այն վորոշմանը, վորով ստեղծվելու յի փոխարժումների կոմիտե : Նրա խնդիրն և պլանավորել փոխարժումները, միջոցներ ձեռք առնել, վոր կլինտուրան ավելի լավ ուժագործի փոխադրական միջոցները, իմաստ կարգապահություն մտցնել կլինտումների մեջ, վերջ տալ հանդիպական փոխադրումներին :

բ) Պարտավորեցնել ազգային կոմկուսների կենտրոններին, մարզկոմներին և յերկրային կոմիտեներին, հատուկ վերահսկողություն սահմանել փոխարժումների համար սահմանված պլանների կատարման վրա (վագոնների ժամանակին բեռնելն ու պարպելը, ընուների կայարան բերելն ու տանելը և այլն), ինչպես և կաղմել ժամանակին ճիշտ պլաններ փոխադրումների համար մարդերի ու ցրջանների համար :

գ) Առաջարկել ժողովմխորհին ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ, ուժեղացնելու թե տնտեսական որդանների և թե տրանսպորտի դատական-վարչական և նյութական պատասխանատվությունը և աշխատողների պատասխանատվությունը փոխադրումների պլանը խարսություն համար և շարժական կազմն սղտագործելու պայմանները խարսություն համար :

դ) Առաջարկել փոխադրումների կոմիտեյի հատուկ հսկողություն հաստատել Հանքի, ածուխի, աղի, կըրաքարի, փայտի, և այլ առարկաների ամառվա փոխադրումների վրա և ապահովել փոխադրումները գեղարի Միջին Ասիա ու Հնուավոր Արեվելք :

յե) Առաջարկել ԺՏԹ-ին անհաղաղ բարելավել

դարձաբանային ներքին փոխադրումը և առբեր ուղիների փոխադրումները (մանավանդ Դոնիքասում, Ուրալում և Կոււլբասում), համապատասխան դարձնելով այդ փոխադրումներն արտադրության ծավալմանը:

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱՑՔԻ ԲԱԿԱՎԱԳՍՈՐԻՄ

1. Արքանադրելով, վոր Հաղորդակցության Ճանապարհների ժողովումատը և յերկաթուղիների վարչությունները մինչև վերջ չեն կիրառել կենտկոմի և ժողովարչի վորոշումը յերկաթուղային տրանսպորտը վերակազմելու մասին՝ արանսպարտի միջին (շրջանային) և ստորին (դեպո, կայարան, դիտունցիա) տրնտեսական ողակների ամբազման վերաբերմամբ, պլենումը պարտավորեցնում ե Հաղորդակցության Ճանապարհների ժողովումին և յերկաթուղիների վարչություններին՝ լրիվ իրագործել այդ վորոշումը և իր հետագա աշխատանքի ընթացքում նկատի ունենալ, վոր անհրաժեշտ և ամրացնել ցրջանը, վորպես տնտեսական կարևորագույն ողակ յերկաթուղային արանսպորտի սիստեմում :

2. Աչքի առաջ ունենալով, վոր տրանսպորտում շափապանց անբավարար և ինժեներա-տեխնիկական աշխատողների թիվը, պլենումն առաջարկում և ժողովարիին լրիվ ապահովել կագրերի պատրաստման Փինանսավորումը 1931 թվականի պլանի համաձայն :

Միանգամայն անբավարար համարելով տեխնիկական ԲՈՒՀ-երի տեխնիկումների և Փաբգործուաների հիմնական ընթարարության ծավալումը, առաջարկել

ԽՍՀՄ-ի ժողկոմիորհին աշխատովել այդ ընարարությունն անհրաժեշտ շինանյութերով։

3. Վերակառուցման աշխատանքների պլանի համաձայն, առաջարկել ՀաՀորդակցության ձանապարհների ժողկոմատին վերակազմել կալբերի պատրաստման ծրագիրն ու ուղղությունը տրանսպորտային բոլոր տեխնիկական ԲՈՒՀ-երում և տեխնիկումներում։

4. Պարտավորեցնել Հաղորդակցության ձանապարհների ժողկոմատին կիրառել տրանսպորտային կադրերի դեսպետչերների, կայարանային կադրի, վարչական տեխնիկական աշխատողների, դեպների ելեկտրոֆարշի, շահագործման բաժնի, և այլ աշխատողների պատրաստումը, նպատակ դնելով բարձրացնել նընարց վորակավորումը՝ վերակառուցման աշխատանքի այդ ձեռնարկումներն ամենաբրդյունավետ կերպով կենսագործելու համար։

Կե-ի պլենումն առաջարկում և Հաղորդակցության ձանապարհների ժողկոմատին, վճռաբար բարելավել տրանսպորտային ապարատի, մանավանդ ուղերատիկ վարչությունների բոլոր ողակների աշխատանքը և ողերատիկ դեկավարությունը, ուժեղացնել տեղերի կենդանի դեկավարումը, կազմակերպելով Հաղորդակցության ձանապարհների ժողկոմատի և յերկաթուղայինների վարչությունների ու ըջանների դեկավար աշխատողների սիստեմատիկ ուղեկությունները դեպի տեղերը, վճռաբար պայքար մղել տրանսպորտային ապարատի ճահճացման ու բյուրոկրատիզմի դեմ, միջոցներ ձեռք առնել, վոր համապատասխան որդաններն արագ կերպով կոնկրետ պատասխաններ տանգիծի, տեղական ուղարկումների, տրանսպորտի առանձին աշխատողների

